

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 185

Աստուածաբաններ խօսում են սրբագործութեան երկու առումների մասին որպէս մահացում եւ կենդանացում (Ուէստմինստըր Հաւատոյ Հանգանակը 13:1): Բացի վարը նշած համարներից, կան բազմաթիւ ուրիշ համարներ Աստուածաշնչում որոնք հակիրճ կերպով ընդգծում են սրբագործութեան այս երկու գաղափարները (օրինակի համար՝ Սաղմոս 1:1-2, 119:11, Հռովմայեցիս 13:14, Ա. Պետրոս 2:24):

Մահացում – Մահացում բառը Անգլերէնում ճանաչւած է որպէս «mortification» որը գալիս է Լատիներէն «mortificare» բայից՝ որը նշանակում է մահացնել, սպանել: Այս մեր սրբագործութեան ժխտական առումն է, ուր հաւատացեալները կոչւած են սպանելու Ադամու եղած հին մարդուն: Թէպէտ մեր հին բնութիւնը մեռել է Քրիստոսի հետ, սակայն այս ընկած բնութեան մնացորդը մնում է մեր մէջ մինչեւ մեր փառաւորումը, եւ այն դեռ պատերազմում է մեր դէմ, եւ կանխ ամեն բան որպէսզի իրագործի իր զօրութիւնն ու ազդեցութիւնը մեր վրայ: Բայց Սուրբ Հոգու առաջնորդութեամբ ու զօրութեամբ մենք կոչւած ենք շարունակաբար սպանել բոլոր մեր մէջ մնացած մեղքը, դէն դնել հին մարդուն, փախել մեղքից, հեռու կենալ դրանից, եւ դուրս հանել դրան ինչպէս հին կեղտոտ հագուստներ, որպէսզի չհնազանդել նրան: Մէկ խօսքով, հարկ է մեզ ամենօրեայ մերժել մնացորդ ընկած բնութեան պահանջները, սովամահ անել այն, դուրս արտաքսել այն, եւ սպանել այն (Ղուկաս 9:23, Հռովմայեցիս 8:13, Եփեսացիս 4:22, Կողոսացիս 3:5-8, Ա. Պետրոս 2:11):

Ուստի հարկ է մեզ ճանաչել մեղքը որպէս այն ինչ որ է իրականում՝ ոչ թէ որպէս մի սխալ կամ տկարութիւն, այլ որպէս մեղք. այն ինչ որը վիրատուում ու անարգում է Աստծուն. որը Աստուած ատում է եւ զայրացած է դրա հանդէպ. որը մեր ճնշիչ, դաժան ու վայրագ ստրկատէրն էր, որի համար Քրիստոս տւեց Իր կեանքը որպէսզի ազատեր մեզ: Մեղքը ատերում է կեանքեր, ընտանիքներ, ու եկեղեցիներ: Ուրեմն պէտք է մեզ ամաչել մեղքից, ատել այն, ողբալ դրա վրայ, խոստովանել այն, եւ մերժել այն (Սաղմոս 38:18, 51:4, 17; Առակաց 8:13, Եզեկիէլ 20:43, Հռովմայեցիս 6:21, 12: 9, Բ. Կորնթացիս 7:10):

Նաեւ մեղքը այլեւս չունի Քրիստոսի մէջ եղածներիս վրայ տիրելու որեւէ իրաւունք: Թէկուզ մենք կարող ենք մեղանչել, սակայն մենք այլեւս պարտաւոր կամ հարկադրւած չենք մեղանչելու: Եւ Աստծոյ զօրութեամբ եւ ներբնակիչ Հոգով մենք ունենք զօրութիւնը դիմադրելու մեղքին: Ուստի հարկ է մեզ լինել անընդհատ արթուն մեղքի դէմ՝ իմանալով պարագաները, տեղերը, մարդիկ, ու սովորութիւնները որոնց հանդէպ մենք տկար ենք, եւ որոնք մեզ փորձութեան են մատնում, եւ հեռու մնալ դրանցից, աղօթել ու պաշտպանել մեր սրտերը որպէսզի չլինի որ ետ ընկնենք գերութեան մէջ եւ հնազանդենք մեղաւոր ցանկութիւններին (Սաղմոս 39:1, Առակաց 4:23, Ղուկաս 22:40, Ա. Թեսաղոնիկեցիս 5:22):

Ուրեմն, երբ մենք մեղանչում ենք, հարկ է մեզ հասկանալ որ մենք լինում ենք անհամապատասխան այն ինչին որ ենք Քրիստոսում՝ մեր նոր բնութեան որպէս Աստծոյ որդիք (Հռովմայեցիս 6:6, Գաղատացիս 5:24, Կողոսացիս 3:9-10): Մենք այլեւս հին մարդը չենք Ադամում. փոխարէն, մենք նոր մարդն ենք ի Քրիստոս: Հետեւաբար, Աստուածաշունչը ուժգնութեամբ կոչ է մղում մեզ որ այլեւս չապրել ըստ մեր հին կեանքը, այլ ապրել ըստ մեր նոր կեանքը: Եթէ ոչ, մենք ապրում ենք հակառակ կամ անհամատեղելի Քրիստոսում եղած մեր նոր ինքնութեան: Լուիս Բրըքհաֆը մահացումը բացատրում է որպէս «Աստծոյ այդ արարքը որով մեղքից յառաջացած մարդկային բնութեան ապականութիւնն ու պղծութիւնը հեռացւում է աստիճանաբար»:

Կենդանացում – Կենդանացում բառը Անգլերէնում ճանաչւած է որպէս «vivification» (նաեւ quickening) որը գալիս է Լատիներէն «vivificare» բայից՝ որը նշանակում է կենդանացնել, կեանք տալ: Այս մեր սրբագործութեան դրական առումն է, ուր հաւատացեալները կոչւած են կենդանացնել Քրիստոսում եղած նոր մարդուն: Այս նշանակում է որ Սուրբ Հոգու առաջնորդութեամբ ու զօրութեամբ մենք կոչւած ենք շարունակաբար հագնել նոր մարդը ինչպէս նոր հագուստները, ընդգրկել մեր նոր կեանքը, նորոգել մեր մտքումը, հնազանդել ուղղարարութեան հրամաններին, եւ ապրել Աստծոյ համար (Հռովմայեցիս 6:4, 13, 12:2, Գաղատացիս 2:19, Եփեսացիս 4:23-24, Կողոսացիս 3:1-2, 12):

Աստուած հայթայթել է շնորհաց միջոցները որով մենք աճելու ենք սրբութեան մէջ. թէ անձնական միջոցներով՝ օրինակի համար Աստուածաշունչի ընթերցում եւ ուսումնասիրութիւն, աղօթք, եւ թէ հաւաքական միջոցներով՝ օրինակի համար պաշտամունք, խորհուրդներ, ծառայութիւն, նւիրատութիւն, եւ այլն: Մինչ կատարում ենք սրանք, Սուրբ Հոգին շարունակաբար կկազմի աստուծային ցանկութիւններ ու առաքինութիւններ մեր մէջ, եւ կկերականգնեցնի Աստծոյ պատկերը մեր մէջ՝ աստիճանաբար կերպարանափոխելով մեզ Քրիստոսանմանութեան, ուր Հոգու պտուղը աւելի ու աւելի երեւան է գալիս մեր կեանքերումը (Բ. Կորնթացիս 3:17-18, Եփեսացիս 3:14-17, Գաղատացիս 5:22-25):

Լուիս Բրըքհաֆը կենդանացումը բացատրում է որպէս «Աստծոյ այդ արարքը որով հոգու սուրբ տրամադրութիւնը ամրապնդում է, սուրբ վարժութիւնները աւելացւում են, եւ ուստի կեանքի մի նոր ընթացք է յառաջացւում ու նպաստում»: